




ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ («Սասունցի Դավիթ» Էպոսի գրառման 120-ամյակը)

Այժմ իբրև բուն նյութ այս գրքույկիս պիտի կցորդեմ ԴԱՎԻԹ ՍԱՍՈՒՆՑԻ կամ ՄՀԵՐԻ ԴՈՒՌՎԵՐՎԱՆՔԻ վեպը, զոր երեք տարի հետամուտ եղա ձեռքս բերելու և ոչ ոք գտա, որ ամբողջապես գիտենար մինչև 1873 հունիս ամսույն՝ Մշո դաշտի Առնիստ գեղի երեսփոխան պ. Կրպոն ներկայացավ ինձ արժանապատիվ Օհան վարդապետի միջոցով։ Սա կպատմեր, թե յուր վարպետը շատ ընդարձակն գիտեր այս պատմություն, և թե մեջ ընդ մեջ շատ տեղեր ոտանավոր խաղեր կային, որ ձայնով կերգեր։ Թե՛ այդ վարպետը երկու վոջիկ աշակերտ ուներ, որոնք շատ կատարյալ սորված էին, և թե ինքն՝ բավական ժամանակ պատմած չլինելով, շատ կտորներ մոռցած էր։ Այնուամենայնիվ երեք օր զինքը պահեցի, խնդրեցի, պատվեցի, պարգևատրեցի, և նա ինքզինքը կազդուրելով, պատրաստելով, պատմեց բերանացի, զոր իրեն բարբառով և գրի անցուցի»։ Այսպես էր գրում 1874 թ. Կ. Պոլսում հրատարակված «Գրոց և բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ. ծրագրեաց Գ. Վ. Սրվանձտեանց» գրքում հեղինակը։

Եվ այդ 1874 թվականը եղավ ու դարձավ մեր մեծագույն Էպոսի, մեր ժողովրդական անգնահատելի վեպի ծննդյան տարին։ Իսկ 1873-ը՝ առաջին գրառման։ Այն, ինչ պատմում ու պատմում էր ժողովուրդը դարեր ի վեր Սասունում, Տարոնում, Վասպուրականում ու հարակից շրջաններում ու վայրերում, գրի էր առել Գարեգին վարդապետ Սրվանձտյանցը և գրով հիշատակել։ Հիշատակում էր, քանզի լավ գիտեր դրա արժեքը, անհա թե ինչու այնքան հետամուտ էր եղել, որ լսի ամբողջական վեպը, և երբ հնար էր եղել, ուրախացել էր սաստիկ ու գրառել և շտապել մեկ տարի անց ներկայացնել ընթերցողին, սակայն արձակ պատումով, թեև գիտեր, որ վեպի շատ հատվածներ երգային են և երգվել են։ Իսկ վեպը պարզ էր ու կառուցիկ և հարազատ զավակն էր իր հող ու ջրի, իր ժողովրդի, իր սրբու-

թյունների. «Բաղդրդու Խալիֆեն շատ զոր ու զորընդեղ կեղնի. ազգար կե-
նե՛ կիգա վըր մեր Սուրբ Կարապետու. շատ զմըր ազգ կնվազցու ու շատ
հետիր կբռնե տանե»: Այսպես էր սկսվում պատումը, սակայն քիչ անց ժո-
ղովրդի ինքնասիրությունը չէր տանում այս նվաստացումը, չէր տանում
Խալիֆի հզորությունը և ահա նրան էր հակադրում ազգի ուժը, «Ըդ Խալի-
ֆեն հեղմ լե ազգար էրեց ու եկավ վըր մըր ազգին. մըր ազգ (մեռնիմ ուր
սուրբ հրաշքին, Սուրբ Կարապետ) ըդ անգամ զինք շատ նեղ լծեց...»:

Իսկ հետո ավելի «Նեղն էր լծելու», երբ Դավիթը հաղթելով Մսրա Մե-
լիքին՝ նստելու էր նրա թախտին: Պատմելու էր ժողովուրդը դարեդար և
հույս ու հավատով սպասելու էր Մհերին, որը հովվին ասելու էր. «Երոր
ցորեն եղավ քրնց ալոն ու գարին եղավ քրնց մասուր մի. հըպամ լե հրա-
մանք կա, որ էլնանք իդա տեղեն»:

Մեկ տարի անց նշանավոր հայագետ Քերովբե Պատկանյանը «Սա-
սունցի Դավիթը» վերահրատարակեց Սանկտ Պետերբուրգում, ապա թարգ-
մանեց և լույս ընծայեց ռուսերեն (1881 թ.), իսկ Արթուր Լալստը թարգ-
մանեց գերմաներենի և հրատարակեց Լայպցիգում՝ նույն թվականին: Վեպը
համընդհանուր ոգևորություն առաջացրեց ազգային շրջանակներում: Հեղի-
նակին շնորհավորական նամակներ հղեցին Պոլսո պատրիարք Ներսես
Արքեպիսկոպոսը, երախտաշատ բանաստեղծ ու ազգային գործիչ Գաբրիել
Պատկանյանը և վերջապես՝ հայագիտության հսկաներից Հայր Ալիշանը և
ուրիշներ:

Այսպիսին էր լինելու «Գրոց-բրոցի» ընդունելությունը: Իսկ նրա հեղի-
նակը հավատալով էր ժողովրդի ապագային, նրա հավերժությանը: Ահա
թե ինչու այնպես ջանադրաբար ու ոգևորությամբ հավաքում ու հավաքում
էր հին ավանդություններն ու մասունք-գրույցները, առասպելները, հավա-
տալիքները:

Ահա ժողովրդին իր ստեղծածը, իր ունեցածն ու դարերով կուտակածը
սիրել տալու ծրագիր-նպատակով էր ասպարեզ իջնում Գարեգին Վարդա-
պետը, դառնալու համար հայ բանագիտության ուսման հիմնական
վիրա՝ ունեցավ իր բազում հետևորդները, որոնք ընթանալով նրա ուղիով,
շատ ու շատ գանձեր փրկեցին կորստից, ուսումնասիրեցին ու դասդասեցին
դրանք, գրառեցին ու հրատարակեցին: Եվ ոչ միայն տեքստերը, այլև եղա-
նակ-երաժշտությունը:

Եվ մի ոսկեհանք դարձավ նրա գրառած էպոսը. հայտնաբերվեցին
«Սասունցի Դավթի» նորանոր և ընդարձակ պատումներ, որոնց թիվն
սկսեց տասնյակներով հաշվվել, հետագայում ամփոփվելով «Սասնա ծռե-
րի» սովոր հատորների մեջ: Էպոսով սկսեցին զբաղվել ու հայ էպոսագի-
տության հիմքը դրեցին ականավոր գիտնականներ, աշխարհին ճանաչելի
դարձնելով այդ մեծագույն գանձը: Բայց երբեք ու երբեք չխամրեց առաջին
հայտնագործողի փառքն ու պատիվը, Գարեգին Սրվանձությանցի փառքը, ո-
րին նա երբեք էլ չձգտեց: Նա քաջ գիտակցում էր, թե դա իր մայր ժողովրդի
փառքն է, որ պիտի վեր հանվի մոռացությունից և վերադարձվի ժողովրդի-
ն: Բայց մի՞թե ժողովուրդն անգիտակ էր իր ստեղծածին: Ոչ և բոլորո-
վին էլ՝ ոչ: Նա պատմում էր ամենուր ու երգում էր ամենուր: Սակայն դեռևս
չկային գիտության այն ճյուղերը հայոց մեջ, որ պիտի զբաղվեին դրանց
համակողմանի ուսումնասիրությամբ: Բայց արդեն կար այդ հետաքրքրու-
թյունը և գնահատանքը, որի սկիզբն էին դրել Խաչատուր Աբովյանը, Մի-
քայել Նավբանդյանը, Ռաֆայել Պատկանյանը, Պերճ Պողոսյանը և այլք:

Սակայն դեռևս ասպարեզ չէր իջել գրառող-հրատարակողը և ըստ հնարավորության՝ ուսումնասիրողը: Եվ այդ առաջինը եղավ Գարեգին Սրբվանձտյանցը, իսկ այդպիսիները միայն մեկ բառով են բնակվում՝ ռահվիրա: Բայց ռահվիրա չեն դառնում իրենք իրենց, նրանց այդպիսին է դարձնում ժամանակը: Իսկ ժամանակն այնպիսին էր, որն անվանում ենք ազգային զարթոնքի վերելքի շրջան, վերելք ամեն մի բնագավառում, որն առնչվում էր ազգային ինքնագիտակցության, հպարտության և ժողովրդին ռզի-կորով հաղորդելու հետ: Այդ մեծ գործին էր ծառայում և բոլորանվեր ծառայեց Գարեգին Սրվանձտյանցը:

Նրա կատարածն իրոք մեծ հայտնագործություն էր: Նա հայտնագործեց մի հրաշք գանձարան, որին ժողովուրդն ի պահ էր տվել հանուն Ազատության ու Անկախության իր մեծ երազանքը, ազատագրական պայքարի հաղթանակի հույս-հավատը, իր հավատալիքներն ու կենցաղը, իր ռզին ու բնավորությունը, այն ամեն լավագույնը, որ ձեռք էր բերել դարերի ընթացքում:

Իսկ ո՞վ էր Սրվանձտյանցը և առհասարակ ի՞նչ ծառայություն է մատուցել հայ մշակույթին և առավելապես՝ բանագիտությանը:

Նա ծնվել էր 1840 թ. նոյեմբերի 17-ին Վանի հռչակավոր Այգեստանում՝ Սանդենց կոչվող ընտանիքում: Նրա մկրտության անունը Օհանես էր և այդ այնուհետև, Եղիշեի հերոսամատյանն ընթերցելուց հետո, իրեն կոչի Ավարայրի հերոսներից մեկի անունով:

Նախ սովրել էր Հայնկույսների վարժարանում, ապա Խրիմյան Հայրիկի հիմնած ժառանգավորաց դպրոցում, ուր ընդունվել էր 17 տարեկանում: Այստեղ էլ սկսեց իր գրական առաջին քայլերը, և նրա բանաստեղծություններն սկսեցին լույս տեսնել Հայրիկի խմբագրած «Արծվի Վասպուրականում»: Դպրոցն ավարտելուց հետո մնաց աշխատելու որպես ուսուցիչ և թերթի խմբագրի օգնական: Այս շրջանում էլ թղթակցում էր Կոստանդնուպոլսի, Թիֆլիսի և Չմյուռնիայի մամուլին, հրատարակելով թե՛ իր գրառած ժողովրդական բանահյուսության նմուշները և թե՛ իր թղթակցություններում պատմելով ժողովրդի ծանր վիճակի մասին: Ապա նաև Խրիմյան Հայրիկի հետ կշրջագայի Արևելյան ու Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում, հանդես կգա որպես նվիրակ ու քարոզիչ: Նրանք կայցելեն նաև Սուրբ Էջմիածին ու Թիֆլիս: Հանգանակած միջոցներով էլ Մշո Սուրբ Կարապետի վանքում կհիմնեն «Արծվիկ Տարոնո» լրագիրը:

Սրվանձտյանցի այս գործունեությունը շատ շուտով կարժանանա թուրքական կառավարության ուշադրությանը և նրա վրա գաղտնի հսկողություն կահմանվի:

Սակայն նա շատ անվախ շարունակում էր իր գործունեությունը, 24 տարեկանում վարդապետ ձեռնադրվելով, Վանում մեծ հեղինակություն է ձեռք բերում իր կրակոտ քարոզներով: Հետո կշրջի համարյա ողջ Արևմտահայաստանը, գործի բերումով կլինի Կարինում, Սեբաստիայում, Դիվրիկում, Ակնում, Երզնկայում, Արաբկիրում ու այլուր և իր ճամփորդական տպավորություններն ու գրառած ժողովրդական բանավեպերն անմիջապես կամփոփի «Թորոս Աղբարի» երկու գրքերում:

Իսկ լրտեսները քնած չէին, և կառավարությունը լավ իրազեկ էր իր գործունեությանը: Եվ եպիսկոպոս դարձած Սրվանձտյանցին կկանչեն Պոլիս, և նա այլևս իրավունք չի ունենա այստեղից դուրս գալ: Այս քաղաքում էլ շատ վաղաժամ, 52 տարեկանում, 1892 թ. կկնքի իր մահկանացուն:

Սակայն նա հասցրել էր շատ բան անել: «Գրոց-բրոցի» և «Թորոս Աղբարի» հետ հրատարակել էր «Հնոց նորոցը», «Մանանան», «Համով հոտովը»: Եվ ի՛նչ բանահյուսական գանձեր էր փրկել դրանցով՝ հեքիաթներ, ավանդություններ, երգեր, հանելուկներ, առած-ասացվածքներ, ժողովրդական ստուգաբանություններ, բարբառային բառեր՝ իրենց բացատրություններով: Իսկ դրանց մեջ ինչպիսի՜ սիրով էր նկարագրում հայրենի բնաշխարհը, տալիս ամեն մի բնակավայրի տեղադրությունն ու վիճակագրությունը:

Նրա այդ գործն ունեցավ իր շարունակողները:

Թեև շատ լավ ընդունելության արժանացավ Սրվանձությանցի հայտնագործությունը, սակայն մինչև 1889 թվականը նոր պատում չհայտնաբերվեց: Միայն այս թվականին էր, որ Շուշիում լույս տեսավ ապագա ակադեմիկոս հայագետ Մանուկ Աբեղյանի «Դավիթ և Մհեր» ժողովրդական դյուցազնական վեպ-գիրքը:

Այն գրի էր առնվել Էջմիածնում աշխատած շրջանում 1886 թվականին Մոկաց Գինեկանց գյուղի շինական Նահապետից (Նախո քեռուց): Այս պատումը հանդես էր բերում գեղարվեստական նոր արժանիքներ և լրացնում Սրվանձությանցի գրառածը: 1892 թվականին նշանավոր հայագետ Գարեգին Հովսեփյանը երկու նոր պատում հրապարակեց Մոկաց և Ապարանի բարբառներով, որոնց երգվող հատվածների ձայնագրությունները կատարել էր Սողոմոն Սարկավազը՝ նույն ինքը հանձարելով Կոմիտասը:

Այնուհետև մինչև 1900 թվականը այդ գրառված պատումների թիվը հասավ 8-ի (Խաչիկ Դադայան, Սարգիս Հայկունի, Բագրատ Խալաթյան), իսկ մինչև 1936 թվականը ընդհանրապես գրառված պատումների թիվը անցավ հինգ տասնյակից, որոնք 1936, 1944, 1951 թվականներին Մանուկ Աբեղյանի խմբագրությամբ և Կարո Մելիք-Օհանջանյանի աշխատակցությամբ լույս տեսան «Սասնա ծռեր» խորագիրը կրող երեք սովոր հատորներում:

1930-ական թվականներին բանահյուսական արշավախումբը երախտավոր Կարո Մելիք-Օհանջանյանի ջանքերով Հայաստանի տարբեր վայրերում մոկացիներից, շատախցիներից, կանեոցիներից, սասունցիներից ու ալաշկերտցիներից գրի էր առել ութ նոր պատում: Նոր պատումներ էին գրառել նաև Արամ Ղանալանյանը, Հարություն Ավնյանը և Վարդ Բոդյանը:

1960-ական թվականներից Էպոսի նոր պատումների գրառման գործում կրկին աշխուժացում է սկսվում: Դրանով են զբաղվում բանագետ Գրիգոր Գրիգորյանը և Վահագն Գրիգորյանը, հայտնաբերելով ևս տասնհինգ պատում-տարբերակ: 1970-ի սղգրների բանասեր-բանագետներ Սարգիս Հարությունյանի և Արուսյակ Սահակյանի ջանքերը մեծ հաջողությամբ են պսակվում: Նրանք կորստից փրկում են ևս 81 պատում: Դրանք ոչ միայն նոր տվյալներ էին հաղորդում մեր ժողովրդական վեպի մասին, այլև ապացուցում, որ Էպոսը շատ տարածված է եղել նաև Սասունում, քանի որ 81 ասացողներից 21-ը սասունցիներ էին: Ընդհանրապես, որ «Սասունցի Դավիթը» շատ տարածված է եղել պատմական Հայաստանի մեծ մասում և մեծ ժողովրդականություն է վայելել՝ կասկածից դուրս է:

Իհարկե, վեպի այդպիսի գրառման թափը դեռևս անցյալ դարավերջից իր հետ բերելու էր նաև բանասերների ու պատմաբանների լայն հետաքրքրությունը: Արդեն դարավերջից լույս են տեսնում Էպոսի պատմական ու համեմատական կողմերին նվիրված Բագրատ Խալաթյանցի և Ստեփան

Կանայանցի հետազոտությունները: Մանուկ Աբեղյանի «Ազգային վեպ», իսկ հետագայում «Հայ ժողովրդական վեպ» գիտական ուսումնասիրությամբ հիմք է դրվում մեր էպոսագիտությանը: Տարիների ընթացքում հանդես են գալիս նորանոր ուսումնասիրություններ ու հոդվածներ, այդ թվում և նշանավոր արևելագետ ու հայագետ Հովսեփ Օրբելու «Հայ հերոսական էպոսը» նշանավոր ուսումնասիրությունը:

1939 թվականին նշվեց «Սասունցի Դավթի» ստեղծման հազարամյակը և այդ առիթով հյուսվեց նրա համահավաք բնագիրը Մանուկ Աբեղյանի, Գևորգ Աբովի և Արամ Ղանալանյանի աշխատասիրությամբ: Այն հրատարակվեց նաև ուսերեն ու այլ լեզուներով և շարունակվում է հրատարակվել: Մեր ազգային էպոսն իր պատմական շերտերով, մտածողությամբ ու համամարդկային վեհ գաղափարներով շատ մեծ հետաքրքրության է արժանացել: Այն որքան՝ ճիշտ է բնութագրել մեծ Վարպետը. «Նա՛ դարերի մեծ բանաստեղծը, իր անսանձ երևակայությամբ խորտակելով ժամանակագրական և աշխարհագրական բոլոր սահմանները, իր ստեղծագործական քուրայի մեջ լցրել է իր հին ու նոր աստվածներին, իր հին ու նոր հավատալիքները, իր հին ու նոր հերոսներին, իր հին ու նոր պատմական հուշերը, նաև էպիկական ընդհանուր մոտիվները և ազգային առանձնահատուկ առասպելները, և խառնել է բոլորը ի մի և ձուլել է նրանցից իր հանճարեղ պատմությունը, միաժամանակ իր բարոյական հայացքները, իր բաղձանքները և հավատը լավագույն ապագայի համար՝ իր բովանդակ հոգին»:

Մեր էպոսը ոգևորել ու ներշնչել է արվեստագետներին, նշանավոր քանդակագործ Երվանդ Քոչարը քանդակել է հանրահայտ արձանը, էպոսի ձևավորումներով հանդես են եկել Հակոբ Կոջոյանը, Մհեր Աբեղյանը, Գրիգոր Խանջյանը, Էդվարդ Իսաբեկյանը, Միհրան Սոսոյանը և ուրիշներ:

Դեռևս 1908 թվականին Մանուկ Աբեղյանը գրում էր. «Սիրելի պիտի լինի մեզ համար մեր վեպը, որ մերն է, մեր սեփականը, մեր ժողովրդի դարավոր պատկերը... ուսումնասիրենք այն բազմակողմանի կերպով և մենք կգտնենք նրա մեջ մեր ժողովրդի խորքերը: Իսկ երբ մեր բանաստեղծներից մի հանճարեղը այդ նյութը նույն ժողովրդական ոգով մշակի վեղարվեստորեն, դա կլինի մեր ազգային բանաստեղծության մարգարիտը»: Տարբեր տարիներին վեպի գրական մշակմանը ձեռնամուխ եղան Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը, Եղիշե Չարենցը, Լևոն Մանվելյանը, Նաիրի Ջարյանը, Տիգրան Չիթունին, Մկրտիչ Խերանյանը և ուրիշներ:

Իսկ մեր էպոսագիտությունը բնավ էլ չի սպառել իրեն:

